DOI: 10.54503/1829-4324.2024.2-34

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԷԼՅԱՆՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 15.09.24, ուղարկվել է գրախոսման՝ 04.12.24, երաշխավորվել է տպագրության՝ 13.12.24

Ներածություն: Յուրաքանչյուր երկրում տնտեսության կառուցվածքը ձևավորվում և զարգանում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բազմաթիվ գործոնների ազդեցության շնորհիվ, որոնց շարքում կարևորվում են երկրի բնական, մարդկային, արտադրական կապիտալները, աշխարհագրական դիրքը, տարածաշրջանային և համաշխարհային շուկաներն ու դրանց հատվածների մատչելիությունը, պատմական, մշակութային և բազմաթիվ այլ հանգամանքներ ու պայմաններ: Եվ քանի դեռ գոյություն ունեն այդ գործոնները և դրանց ազդեցության պայմանները, միշտ արդիական կմնա տնտեսության կառուցվածքի և դրա բարելավման հիմնախնդիրը, ուստի և այն կլինի զարգացման ծրագրեր մշակողների և իրականացնողների ուշադրության կենտրոնում:

Տնտեսության կառուցվածքի ձևավորման հիմնախնդիրը առանձնահատուկ կարևորություն և նշանակություն է ձեռք բերում անցումային տնտեսությամբ երկրներում, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում: Այս հանգամանքը պայմանավորված է երկրի անցմամբ համայնավարական տնտեսակարգից դեպի շուկայական տնտեսավարման միջավայր, որն ուղեկցվել է բարդություններով և շարունակում է մնալ բարդ, դժվարին, անորոշություններով ու սպառնալիքներով ուղեկցվող: Սա մի կողմից: Իսկ մյուս կողմից, քանի որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է ժողովրդավարական ուղին, բաց և սոցիալական շուկայական տնտեսություն (այդ մասին ամրագրված է ՀՀ գործող Սահմանադրությունում, որը համաժողովրդական հանրաքվեով ընդունվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ին) կառուցելու մոտեցումը՝ տնտեսության արդյունավետ կառուցվածք ունենալը կարող է դառնալ ողջ տնտեսության առողջացման հանգուցային կետն ու դրա արդյունավետության բարձրացման հիմնական միջոցը և ուղին: Իսկ, եթե նկատի ունենանք, որ ՀՀ ներկայիս տնտեսության հիմնական թույլ կողմը աշխատանքի ցածր արտադրողականության մակարդակն է, և դա ճանաչվել է որպես ռազմավարական հիմնախնդիր, ուստի տնտեսության կառուցվածքի արդյունավետության բարձրացումը առարկայական և նպատակային կդարձնի աշխատանքի արտադրողականության բարձրացման հասցեականությունը:

Հոդվածի նպատակն է բացահայտել երկրի տնտեսության կառուցվածքի և դրա արդյունավետության մակարդակը (ՀՀ օրինակով): Նշված նպատակը կարող է ընդհանրական և ցանկալի լինել ոչ միայն անցումային տնտեսությունների, այլև

ցանկացած երկրի տնտեսական քաղաքականություն մշակող և իրականացնող մասնագետների և կազմակերպությունների, ինչպես նաև կառավարությունների համար, ովքեր իրենց երկրներում կառուցում են շուկայական տնտեսություն: Հայաստանի Հանրապետության օրինակը և, հատկապես, վերջին 30 տարվա ընթացքում իրականացված բարեփոխումները հանգեցրել են նրան, որ ի տարբերություն նախկին բազմաթիվ համայնավարական երկրների, Հայաստանի երրորդ հանրապետությունը մերձբալթյան նախկին համայնավարական 3 երկրների (Էստոնիա, Լատվիա, Լիտվա) ընդգրկված է «կապիտալիստական» համարվող երկրների ցանկում[1]: Կապիտալիզմը տնտեսական գաղափարախոսություն է, ըստ որի արտադրության միջոցները վերահսկվում են մասնավոր բիզնեսի կողմից, ինչը նշանակում է, որ առանձին քաղաքացիներ տնտեսությունը՝ հատկապես ապրանքների ու ծառայությունների արտադրության ու գնագոյացման գործընթացները, ղեկավարում են առանց կառավարության միջամտության: Փոխարենը գնագոյացումը սահմանում է ազատ շուկան: Այլ կերպ ասած, ապրանքների և ծառայությունների արժեքը հիմնված է առաջարկի ու պահանջարկի՝ այսինքն՝ արտադրողների և սպառողների միջև ձևավորված փոխհարաբերությունների վրա:

Կապիտալիզմը, որպես տնտեսության կազմակերպման եղանակ, խիստ տարբերվում է սոցիալիզմից և կոմունիզմից, որտեղ կառավարությունը համատարած վերահսկում է տնտեսական գործընթացները: Ամերիկայի Միացյալ Նահանգները, կարելի է ասել, կապիտալիստական տնտեսությամբ ամենահայտնի երկիրն է[2]: Այս տեսանկյունից, եթե երկրի զարգացման նպատակը կապիտալիստական արտադրական հարաբերությունների (ազատ շուկայի սկզբունքներով աշխատող) տնտեսության ստեղծումը և զարգացումն է, ապա ՀՀ-ի օրինակը կարող է օգտակար լինել տնտեսության կառուցվածքի և դրա արդյունավետության գնահատման ու հանձնարարականներ մշակելու և մեթոդաբանական առաջարկներ ներկայացնելու առումով:

Թեև երկրի տնտեսության կառուցվածքը ձևավորվում և փոփոխությունների է ենթարկվում բազմաթիվ գործոնների ազդեցության շնորհիվ, սակայն դրանց շարքում ժամանակին համընթաց ու տարածաշրջանային և համաշխարհային տնտեսության ինտենսիվ ինտեգրման ու մրցակցության պայմաններում առաջին պլան է մղվում տնտեսության այնպիսի կառուցվածքի ձևավորումը, որը այդ մրցապայքարում կապահովի բարձր արդյունավետություն, ինչն իր հերթին կապահովի տվյալ երկրի ապրանքների և ծառայությունների մրցունակությունը նշված շուկաներում: Այդ հանգուցային խնդրի լուծման միջոցը տնտեսության կառուցվածքի արդյունավետության որոշումն է (չափումը): Ինչպես հայտնի է տնտեսական հարթության ցանկացած մակարդակի արդյունավետության հաշվարկը

1 Կապիտալիստական երկրներ, https://worldpopulationreview.com/country-rankings/capitalist-countries, էլ. ռեսուրսը առկա է 13.09.2024թ. դրությամբ

2 Նույն տեղում

պարտադրում է ունենալ երկու մեծություն՝ գործունեության արդյունքը և այդ արդյունքի ձեռքբերման համար կատարված ծախսերը կամ դրա ստացման նպատակով կատարված մարդկային, նյութական և ֆինանսական ներդրումները (ռեսուրսները)։ Թե՛ տնտեսական գործունեության, և թե՛ դրա ձեռքբերման ծախսերի (ներդրված ռեսուրսների) բովանդակության և մեծությունների վերաբերյալ մասնագետների տեսակետներն ու մոտեցումները տարբերվում են։ Հոդվածի հեղինակները տնտեսության կառուցվածքի արդյունավետության գնահատման (չափման) համար առաջարկում են օգտագործել մատչելի (առկա) վիճակագրական տվյալները (դրանց որոշակի կամ մասնակի փոփոխություններով՝ ագրեգացմամբ)։ Այս մոտեցումը պայմանավորված է, նախ և առաջ, տնտեսության կառուցվածքի վերաբերյալ ազգային և միջազգային տվյալների ու ստորաբաժանման մոտեցումների տարբերությամբ և դրանք մոտարկելու անհրաժեշտությամբ, ինչը առավել համադրելի կդարձնի տարբեր երկրների տնտեսությունների կառուցվածքը ու դրանց արդյունավետության մակարդակի չափումը։

Գրականության ակնարկ։ Երկրի տնտեսությունը բաղկացած է տնտեսական գործունեության առանձին տեսակներից և ոլորտներից, որոնց կազմն էլ բնորոշում է տնտեսության կառուցվածքը, որը չափվում է տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի կազմում առանձին տնտեսական գործունեության տեսակների և ոլորտների բաժինների մեծությամբ, իսկ նման հաշվարկների հիմքում դրվում են ՀՆԱ-ի, այդ թվում՝ համախառն ավելացված արժեքի ցուցանիշները։ Ակնհայտ է նաև, որ հասարակության հարստության և եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրը տնտեսության տարբեր ոլորտներում օգտագործվող ռեսուրսների արդյունավետության մակարդակն է, որը կարելի է բնորոշել նաև որպես արժեստեղծման գործընթաց։ Այս կառուցվածքը սովորաբար բաժանվում է երեք հիմնական հատվածների՝ առաջնային, երկրորդային և երրորդային, որոնցից յուրաքանչյուրը որոշակի դեր է խաղում տնտեսական համակարգում[3]։

Տնտեսության հատվածները։ Ազգային տնտեսությունը իր կառուցվածքով միատարր չէ, այն կազմված է մի քանի հատվածներից, որոնք ձևավորվել են երկրի պատմական զարգացման տարբեր ժամանակաշրջաններում։ Որպես հատված առանձնացնում են երկրի տնտեսության այն մասը, որն ունի մյուսներից տարբերվող սոցիալ-տնտեսական բնութագրեր։ Տնտեսության հատվածը ազգային տնտեսության խոշորացված մասն է, որը ներառում է ընդհանուր նպատակներ, գործառույթներ, բնութագրեր և վարքագիծ ունեցող տնտեսական գործունեության տեսակները, որոնք թույլ են տալիս տարբերակել այն մյուս հատվածներից։ Այն միավորում է ընդհանուր գծեր, որոնք թույլ են տալիս կառուցվածքային առումով բաժանել տնտեսական համակարգը։ Յուրաքանչյուր երկրի տնտեսությունը կազմված է երեք հատվածներից՝ առաջնային, երկրորդային և երրորդային։ Առաջնային հատվածը ներառում է ռեսուրսների

3 Smith, J., Economic Structures and Growth. New York: Economic Press. 2020, p. 45

արդյունահանմամբ զբաղվող ոլորտները, երկրորդը՝ վերամշակմամբ զբաղվողները, իսկ երրորդը ծառայությունների ոլորտն է (ներառյալ՝ առևտուրը, տրանսպորտը, կապը, առողջապահությունը, կրթությունը, զբոսաշրջությունը և այլն)[4]:

Տնտեսության առաջնային հատված: Այն ներառում է գյուղատնտեսությունը և հանքարդյունաբերությունը: Գյուղատնտեսությունը հանդիսանում է հատկապես բազմաթիվ զարգացող երկրների (իսկ Հայաստանի Հանրապետությունն այդպիսին է) տնտեսության հիմքը՝ զգալիորեն նպաստելով ՀՆԱ-ի աճին և աշխատանքի շուկայում ապահովելով բնակչության զբաղվածությանը: Տնտեսությունների զարգացմանը զուգընթաց, գյուղատնտեսության հարաբերական նշանակությունը (բաժինը կամ տեսակարար կշիռը) նվազում է, թեև այն շարունակում է կարևոր մնալ երկրի պարենային անվտանգության և մշակող արդյունաբերության հումքի համար[5]: Արևմտյան դասակարգմամբ օգտագործվում է «գյուղատնտեսություն» եզրը, իսկ ՀՀ-ում, վիճակագրական կոմիտեի կողմից ընդունված դասակարգմամբ, այն համապատասխանում է «գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն» ոլորտին:

Հանքարդյունաբերությունը միավորում է բնական ռեսուրսների արդյունահանումը, ինչպիսիք են՝ օգտակար հանածոները և կազմում է այս ոլորտի (առաջնային հատվածի) երկրորդ կարևոր բաղադրիչը: Այս ոլորտը բնութագրվում է իր բարձր կապիտալատարությամբ (ինտենսիվությամբ) և շրջակա միջավայրի և տնտեսության վրա զգալի բացասական ազդեցությամբ, հատկապես ռեսուրսներով հարուստ երկրներում[6] կամ տարածաշրջաններում: Արևմտյան դասակարգմամբ օգտագործվում է «Հանքարդյունաբերություն և արդյունահանում» եզրը, իսկ ՀՀ-ում՝«Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում»:

Տնտեսության երկրորդային հատված: Արտադրությունը հումքը վերածում է պատրաստի արտադրանքի կամ կիսաֆաբրիկատների և հանդիսանում է տնտեսական աճի և զարգացման հիմնական շարժիչ ուժը: Այն կապված է տնտեսական գործունեության տեսակների արդյունաբերականացման հետ և հաճախ դիտվում է որպես ավելի բարձր արտադրողականության և տեխնոլոգիական առաջընթացի ուղի[7]: Արևմտյան դասակարգմամբ օգտագործվում է «արտադրություն» եզրը: ՀՀ-ում վարվող վիճակագրությունում նման եզր, որպես տնտեսական գործունեության առանձին տեսակ, չի օգտագործվում: Դրա փոխարեն մենք օգտագործում ենք այլ հասկացություն, որը համապատասխանում է «արդյունաբերություն՝ ներառյալ էներգետիկա» ոլորտին:

---

4 Первичный и вторичный сектора экономики (spravochnick.ru)

5 Jones, A. Agricultural Economics: An Overview. London: Greenleaf Publishing. 2018, p. 67

6 Brown, T., & Green, R., Mining Economics. Boulder: Rocky Mountain Press. 2017, p. 112

7 White, H., Manufacturing and Industrial Growth. Chicago: Midwest Books. 2019, p. 89

Շինարարությունը ներառում է ենթակառուցվածքների զարգացումը և շինարարական աշխատանքները, որոնք էական նշանակություն ունեն արտադրական և սոցիալական կարողությունների, հնարավորությունների ընդլայնման և տնտեսական զարգացման համար: Այս ոլորտը ոչ միայն աջակցում է այլ ոլորտներին, այլև ուղղակիորեն ազդում է զբաղվածության և տնտեսական կայունության վրա[8]: Արևմտյան դասակարգմամբ օգտագործվող «տնտեսության երկրորդային հատված» եզրի երկրորդ բաղադրիչն է մեզանում ընդունված «շինարարություն» ոլորտը, որը որպես տնտեսության առանձին հատված չի օգտագործվում: ՀՀ վիճակագրական կոմիտեն օգտագործում է «շինարարություն» եզրը ՝ որպես տնտեսական գործունեության առանձին տեսակ (ոլորտ):

Արևմտյան հեղինակների դասակարգմամբ տնտեսության երրորդային հատվածը իր մեջ ներառում է ծառայությունները: Այս հատվածը համախմբում է գործունեության լայն շրջանակ, ինչպիսիք են՝ առողջապահությունը, կրթությունը, ֆինանսները և մանրածախ առևտուրը: Զարգացած տնտեսություններում այս ոլորտը հաճախ ամենաշատն է նպաստում ՀՆԱ-ի աճին և զբաղվածության ապահովմանը, ինչն արտացոլում է դեպի մարդկային կապիտալի զարգացումը միտված և գիտելիքի վրա հիմնված տնտեսության ստեղծում տեղաշարժը[9]: Արևմտյան դասակարգմամբ տնտեսության երրորդային հատվածն իր կազմում ընդգրկում է «ծառայություններ» և «տեղեկատվական տեխնոլոգիաներ» ոլորտները[10]: Վերջինիս առանձնացումը՝ որպես տնտեսության առանձին մաս բացատրվում է տնտեսության բոլոր ոլորտներում դրանց ունեցած նշանակությամբ:

ՀՀ վիճակագրական կոմիտեի «առևտուր և ծառայություններ» տնտեսական գործունեության ոլորտի մեջ ներառում է գործունեության տեսակների լայն ցանկ, ինչպիսիք են՝ մեծածախ և մանրածախ առևտուրը, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգումը, փոխադրումները և պահեստային տնտեսությունը, կացության և հանրային սննդի կազմակերպումը, տեղեկատվությունը և կապը, ֆինանսական և ապահովագրական գործունեությունը, անշարժ գույքի հետ կապված գործունեությունը, մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեությունը, վարչարարական և օժանդակ գործունեությունը, պետական կառավարումը և պաշտպանությունը, պարտադիր սոցիալական ապահովագրությունը, կրթությունը, առողջապահությունը և բնակչության սոցիալական սպասարկումը,

8 Clark, P., Construction Economics. London: Builder's Guild Press. 2021, p. 134

9 Wilson, R., The Service Sector in Modern Economies. New York: Service Sector Publishers. 2022, p. 56

10 Հետաքրքիր է նշել, որ ՀՀ ՎԿ-ի կողմից "Հայաստանի ազգային հաշիվների՝ գծապատկերներում օգտագործվում է նույն դասակարգումը, սակայն «ՀՆԱ-ի բաղադրիչներ կամ տարբեր անվանմամբ»

մշակույթը, զվարճությունների և հանգստի կազմակերպումը, ինչպես նաև սպասարկման այլ ծառայությունները[11]:

Ամփոփելով տնտեսական գործունեության տեսակների (արևմտյան դասակարգմամբ՝ հատվածների) վերաբերյալ արևմտյան աղբյուրների (իր երկու՝ առանձին հեղինակների և Համաշխարհային բանկի մասնագետների) և ՀՀ վիճակագրական կոմիտեի դասակարգումների տարբերությունները և նմանությունները, կարող ենք նշել, որ.

1. Արևմտյան դասակարգմամբ օգտագործվում է տնտեսության 3 հատված՝ առաջնային, երկրորդային և երրորդային, ինչպես նաև «գյուղատնտեսություն», «արդյունաբերություն (ներառյալ՝ շինարարությունը)», «մշակող արդյունաբերություն», որն իր հերթին մտնում է արդյունաբերության կազմում և «ծառայություններ» հատվածները: Սա Համաշխարհային բանկի դասակարգումն է, որի հիման վրա էլ հաշվարկվում է ՀՆԱ-ում նշված յուրաքանչյուր հատվածի ավելացված արժեքը[12],

2. ՀՀ վիճակագրական կոմիտեն իր հրապարակումներում օգտագործում է տնտեսական գործունեության 21 տեսակ, որոնց ավելացված արժեքը կազմում են երկրի ՀՆԱ-ն: Հայաստանի պրակտիկայում չի օգտագործվում ո՛չ տնտեսության առաջնային, երկրորդային, երրորդային հատվածների դասակարգումը, ո՛չ էլ ոլորտային դասակարգումը, որն ընդունված է Համաշխարհային բանկի կողմից,

3. Հեղինակները առաջարկում են օգտագործել տնտեսական գործունեության Համաշխարհային բանկի դասակարգումը կամ օգտագործել «գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն», «արդյունաբերություն՝ ներառյալ էներգետիկան», «շինարարություն» և «առևտուր և ծառայություններ» չորս ոլորտային եզրերը:

Կարծում ենք, տնտեսական գործունեության բոլոր տեսակները 3 կամ 4 ոլորտների կազմում խմբավորումը (դասակարգումը)՝ 21 տնտեսական գործունեության տեսակների պահպանման պայմանով, նպատակահարմար է այն տեսանկյունից, որ ավելի առանցքային է դառնում տնտեսական քաղաքականության տարբերակների մշակումը, այդպիսով հեշտ է կանխորոշել այդ քաղաքականությունների տարբերակները, քանի որ դրանք կազմում են 3!=1×2×3=6 կամ 4!=1×2×3×4=24 տարբերակ, իսկ 21!-ը կազմում է 51090942171709440000 թիվը, որը նույնիսկ դժվար է կարդալ, էլ ուր մնաց թե դրանք ձևակերպել և իրականացնել տնտեսական զարգացման և քաղաքականությունների ծրագրերում:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ (SS): Տնտեսական գործունեության այս տեսակի առանձնացումը, որպես գործունեության առանձին ոլորտ,

---

11 Տե՛ս, օրինակ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2023, Եր., ՀՀ ՎԿ, 2023թ., էջ 287-288

12 Տե՛ս, օրինակ, World Development Indicators | The World Bank և համապատասխան մետատվյալները

պայմանավորված է այն հանգամանքով, որ տեղեկատվական տեխնոլոգիաները դարձել են ժամանակակից տնտեսությունների առանցքային ուղղությունը՝ խթանելով նորարարությունն ու տնտեսական արդյունավետությունը: ՏՏ ոլորտի աճը հանգեցրել է տնտեսության կառուցվածքի զգալի փոփոխությունների: Ավելին, ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային շուկաներում երկրների տնտեսություններն են գործում և մրցակցում՝ ելնելով հիմնականում ՏՏ-ի պոտենցիալի (ներուժի) միջոցով[13]:

Տնտեսական գործունեության հատվածների կարգավորման տեսա-գործնական շրջանակները:

Դասական և նորդասական ուսումնասիրություններ: Ադամ Սմիթը և նրա հետևորդ դասական տնտեսագետներն ընդգծեցին ու կարևորեցին արտադրության նշանակությունը և շուկաների դերը ռեսուրսների բաշխման գործում: Նորդասական տնտեսագիտությունը հիմնվում է այս գաղափարների վրա՝ կենտրոնանալով առաջարկի և պահանջարկի հավասարակշռության և շուկայական արդյունքների արդյունավետության վրա[14]:

Քեյնսյան տնտեսագիտություն: Քեյնսյան տնտեսագիտությունը, որը ներկայացրել է Ջոն Մեյնարդ Քեյնսը, ընդգծում է կառավարության միջամտության և համախառն պահանջարկի դերը տնտեսական պարբերաշրջանների կարգավորման գործում: Այս շրջանակն ազդեցիկ է եղել և շարունակում է մնալ այդպիսին ժամանակակից տնտեսական քաղաքականությունների ձևավորման գործում, մասնավորապես՝ ի պատասխան տնտեսական անկումների և դրանցից դուրս գալու մակրոտնտեսական քաղաքականության մշակումների և դրանց կիրառման[15]:

Էմպիրիկ ուսումնասիրություններ և առանձին օրինակներ

Զարգացած տնտեսություններ: Զարգացած տնտեսությունների և դրանց կառուցվածքների ուսումնասիրությունները (ինչպիսիք են, օրինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Գերմանիան) ցույց են տալիս, թե ինչպես են կառուցվածքային փոփոխությունները ուղղորդվում դեպի ծառայությունների և տեխնոլոգիաների ոլորտները և դրանով իսկ խթանում տնտեսական աճը և բարձրացնում տնտեսության արդյունավետությունը[16]:

Զարգացող տնտեսություններ: Ի հակադրություն զարգացած տնտեսությունների, զարգացող տնտեսությունները (ինչպիսիք են, օրինակ,

---

13 Տե՛ս, նաև Ջ.Մ.Քեյնս, Զբաղվածության տոկոսի և փողի ընդհանուր տեսություն, Եր., «Տիգրան Մեծ», 2006, էջ 57: Առաջաբանը և խմբագրությունը Ա.Մարկոսյանի

14 Marshall, A., Principles of Economics. London: Palgrave Macmillan. 2015, p. 23

15 Ջ.Մ.Քեյնս, Զբաղվածության տոկոսի և փողի ընդհանուր տեսություն, Եր., «Տիգրան Մեծ», 2006, 350 էջ: Տե՛ս նաև Ա.Մարկոսյան, Վ,Խաչատուրյան, Է.Մաթևոսյան. «Ժամանակակից պետության տնտեսագիտություն. տնտեսության պետական կարգավորման գործիքակազմը», Եր., Անտարես հրատ., 2020թ., 628 էջ

16 Miller, S., & Clark, D., Economic Structures of Developed Nations. New York: Global Economics Press. 2018, p. 78

Հնդկաստանը և Բրազիլիան) բախվում են տարբեր բնույթի մարտահրավերների և հնարավորությունների առաջնային ոլորտներից երկրորդային և երրորդային ոլորտներին (հատվածներին) անցնելու ընթացքում: Այս անցումները վճռորոշ են կայուն զարգացման և աղքատության կրճատման գործում[17]:

Չորրորդային հատված: Վերջին տարիներին ավելի ու ավելի է կարևորվում տնտեսության չորրորդային հատվածը, ինչը ներառում է գիտելիքի վրա հիմնված գործունեությունը՝ ներառյալ հետազոտությունները և զարգացումը (R&D), տեղեկատվական տեխնոլոգիաներն ու խորհրդատվական ծառայությունները: Այս ոլորտը մեծ նշանակություն է ձեռք բերել տեղեկատվական դարաշրջանի և գլոբալացման ընդլայնման հետ՝ շեշտը դնելով ինչպես մտավոր կարողությունների, այնպես էլ ֆիզիկական ներդրումների վրա[18]:

Քննական հատված: Քննական հատվածը ներկայացնում է տնտեսությունում որոշումների կայացման ամենաբարձր մակարդակները, ներառյալ՝ բարձրաստիճան ղեկավարները, պետական պաշտոնյաները և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների ղեկավարները: Այս ոլորտն ազդում է բոլոր մյուս ոլորտների վրա՝ քաղաքականության մշակման, ռազմավարական որոշումների ընդունման և բարձր մակարդակի վարչարարության իրականացման միջոցով[19]:

Հետազոտության մեթոդաբանությունը: Յուրաքանչյուր երկրի տնտեսություն կարելի է դիտարկել ինչպես հարաբերականորեն փակ, այնպես էլ բաց համակարգ, որտեղ տեղի են ունենում բազմաթիվ տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, պատմական, աշխարհաքաղաքական և այլ երևույթներ ու գործընթացներ: Այլ կերպ ասած, երկրի տնտեսությունը և նրա կառուցվածքը իր մեջ ընդգրկում և արտացոլում է թե՛ ազգայինը և թե՛ միջազգայինը, այսինքն՝ այն դինամիկ և անընդհատ շարժման ու փոփոխությունների մեջ գտնվող բարդ համակարգ է: Ըստ որում, այդ համակարգի զարգացման «ճիշտ» կամ «սխալ» հետագծի և, առավել ևս, դրա հետագա զարգացման կամ հեռանկարի հարցը մեծապես կախված է այն հարցի պատասխանից, թե այդ համակարգը ինչպե՞ս է բավարարում և ապահովում տվյալ երկրի առջև կանգնած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծումը, կամ այլ կերպ ասած, այդ տնտեսությունը ինչպե՞ս է ծառայում պետության և հասարակության մեծ մասի շահերին և, վերջին հաշվով, ինչպե՞ս է այն ապահովում բնակչության կենսամակարդակի բարձրացումը, կյանքի որակի բարելավումը և ազգային անվտանգությունը:

Նկատի ունենալով ցանկացած երկրի զարգացման ռեսուրսների սահմանափակությունը, և հատկապես դրանց սահմանափակության աճող մասշտաբները, տարածաշրջանում և համաշխարհային օրեցօր աճող

17 Sanchez, P., Development Economics: Transitions and Growth. Rio de Janeiro: South American Press. 2019, pp. 144

18 Johnson, L., The Knowledge Economy. Cambridge: Knowledge Press. 2018, p. 155

19 Peters, H., Leadership and Economic Strategy. Oxford: Strategy Publications. 2020, p. 203

մրցակցությունը և յուրաքանչյուր քառակուսի մետրի համար մղվող պայքարի ուժգնացումը, կարելի է պնդել, որ յուրաքանչյուր պետություն «արևի տակ» իր տեղը կարող է ապահովել և գոյատևել տնտեսության արդյունավետության բարձրացման ճանապարհով: Իսկ վերջինիս ձեռք բերման միջոցը տնտեսության այնպիսի կառուցվածքի ձևավորումն է, որը տվյալ ռեսուրսային ապահովածության պայմաններում կապահովի առավելագույն ավելացված արժեք: Իսկ որպեսզի ապահովվի նշված նպատակը անհրաժեշտ է կարողանալ ճիշտ գնահատել ոչ միայն տնտեսության կառուցվածքը, այլև պարզել և վերհանել այն միջոցները, որոնք էլ ավելի արդյունավետ կդարձնեն միևնույն բազային մակարդակին, նյութական և ֆինանսական ռեսուրսների ապահովվածության և առկայության պայմաններում հնարավոր կդարձնեն պետության և հասարակության առաջնային զարգացումը: Այդ նպատակին հասնելու բազմաթիվ գործոնների և հանգամանքների շարքում կարևոր է տնտեսության այնպիսի կառուցվածքի ձևավորումը, որը կապահովի հետևյալ պայմանները.

✓ Տնտեսության առաջնային, երկրորդային և երրորդային հատվածների (ոլորտների) միջև զարգացման այնպիսի համամասնությունների և տեմպերի ապահովումը, որի դեպքում միավոր հումքից (նույնական նյութից) կապահովվի առավել մեծ արժեք ունեցող վերջնական արդյունք, կամ այլ կերպ ասած, բնությունից վերցված միավոր հումքին կավելանա առավելագույն քանակությամբ մարդկային աշխատանք (ինչպես կենդանի, այնպես էլ առարկայացած): Որպեսզի ապահովվի այս պայմանը անհրաժեշտ է պահպանել կամ առնվազն ձգտել հասնելու հետևյալ համամասնությունների պահպանմանը՝

✓ տնտեսության երրորդային հատվածի (ոլորտի) ավելի արագ աճի տեմպի ապահովում, քան երկրորդային հատվածի (ոլորտի) աճի տեմպն է, և վերջիններիս աճի ավելի բարձր տեմպերի ապահովում, քան առաջնային հատվածի (ոլորտի) աճի տեմպն է: Բանաձևի տեսքով այն կունենա հետևյալ տեսքը.

Ո3 > Ո2 > Ո1, որտեղ՝

Ո – տնտեսության ոլորտ հասկացությունն է:

Այս պայմանի ապահովման դեպքում կարելի է ակտիվացնել և բարձրացնել տնտեսության կառուցվածքի արդյունավետությունը:

Նկատի ունենալով, որ երկրի տնտեսությունը բարդ և բազմակողմանի երևույթ է (ժամանակի կոնկրետ պահին այն ստատիկ վիճակ է, իսկ ժամանակի տարբեր պահերին՝ դինամիկ համակարգ է), ուստի դրա կառուցվածքի արդյունավետության գնահատումը միայն մեկ ցուցանիշի օգնությամբ լիարժեք և ամբողջական չի կարող արտահայտվել:

Այդ պատճառով էլ տնտեսության կառուցվածքի արդյունավետության գնահատման նպատակով սույն հոդվածի շրջանակում առաջարկվում է օգտագործել. (1) ՀՀ համախառն ավելացված արժեքի արտադրության արդյունավետության ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հատվածների (ոլորտների)՝ որպես դրանց համախառն ավելացված արժեքի

հարաբերություն ռեսուրսների (կամ թողարկման) մեծությանը (տոկոսներով արտահայտված), ինչպես նաև (2) ՀՀ տնտեսական գործունեության հատվածների (ոլորտների) եկամուտների ձևավորման հաշվի կառուցվածքն ըստ եկամուտների ձևավորման բաղադրիչների: Վերջին ցուցանիշը բնութագրում է, թե ըստ ՀՀ տնտեսության առանձին հատվածներում ներդրված համախառն ավելացված արժեքը (ռեսուրսը) եկամուտների ինչպիսի մակարդակ է ապահովում (տոկոսային արտահայտությամբ): Այլ կերպ ասած՝ այն նույնպես բնութագրում է ավելացված արժեքի արդյունավետության մակարդակը ըստ առանձին եկամուտների ձևավորման տեսակների:

Վերլուծություն: Աղյուսակ 1-ում բերված են ՀՀ համախառն ավելացված արժեքի արտադրության արդյունավետության մակարդակները ըստ տնտեսական գործունեության հատվածների (առաջնային, երկրորդային, երրորդային, ինչպես նաև ամբողջ տնտեսության համար) 2019-2022թթ. տվյալներով, այդ տարիների համար հաշվարկված միջին տարեկան ցուցանիշներով: Նշված ժամանակահատվածի (4 տարվա կտրվածքով) առանձնացումը պայմանավորված է ավելի ստույգ և որոշակի պատկերացում կազմելու անհրաժեշտությամբ, քանի որ այդ ժամանակահատվածում (խոսքը 2020թ.-ի մասին է, երբ տեղի ունեցավ հայ-ադրբեջանական 44-օրյա պատերազմը և COVID-19 համավարակը) ՀՀ ՀՆԱ-ի նշանակալի, ֆորս-մաժորային իրավիճակներով պայմանավորված, նվազումը կարող էր խեղաթյուրել իրական պատկերը:

Աղյուսակ 1-ի տվյալներից հետևում է, որ ՀՀ տնտեսության առաջնային հատվածի արդյունավետության ցուցանիշն ունեցել է «անկայուն» կամ փոփոխական վարքագիծ, ըստ որի այն 2020թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 1.1 տոկոսային կետով (որի հիմնական պատճառը COVID-19 համավարակը և հայ-ադրբեջանական 44-օրյա պատերազմն է եղել, ինչի հետևանքով ՀՀ ՀՆԱ-ի նվազման չափը կազմել է 7.2%)[20]: Այնուհետև առաջին հատվածը գրանցել է 2.6 տոկոսային կետով աճ, իսկ 2022թ.-ին նախորդ տարվա համեմատ ՀՀ տնտեսության առաջնային հատվածը արդյունավետության մակարդակը եղել է փոփոխական և 2022թ.-ին 2019թ.-ի համեմատությամբ այդ ցուցանիշը ունեցել է 0.3 տոկոսային կետով առաջընթաց: Եվ եթե նշված տարիներին գյուղատնտեսության, անտառային տնտեսության ձկնորսության ոլորտի ցուցանիշները մնացել են անփոփոխ, ապա առաջնային հատվածի արդյունավետության աճը ձեռք է բերվել հանքագործության և բացահանքերի շահագործման տնտեսական գործունեության տեսակի արդյունավետության բարձրացման հաշվին:

Գրեթե նույնանման վարքագիծ նկատվել երկրորդային հատվածում: Սակայն, ընդհանուր առմամբ, այս հատվածի արդյունավետության մակարդակը 2022թ.-ին 2019թ.-ի համեմատությամբ նվազել է 0.5 տոկոսային կետով:

20 Տե՛ս Ժամանակագրական շարքեր / Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (armstat.am)

Համեմատաբար կայուն վարքագիծ է դրսևորել ծառայությունների ոլորտը, որի արդյունավետության մակարդակը նշված բոլոր տարիներին եղել է անփոփոխ և տնտեսության մյուս հատվածների համեմատությամբ ունեցել է արդյունավետության ամենաբարձր մակարդակը (73.0%)։

Աղյուսակ 1

ՀՀ համախառն ավելացված արժեքի արտադրության արդյունավետությունն ըստ տնտեսական գործունեության հատվածների 2019-2022 թթ., տոկոսներով՝ համախառն ավելացված արժեքի հարաբերությունը ռեսուրսների թողարկմանը[21]

Տնտեսական գործունեության հատվածները	2019	2020	2021	2022
1. Առաջնային	63.5	62.4	65.0	63.8
այդ թվում՝				
1.1 Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսություն	64.8	63.7	64.9	64.8
1.2 Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	59.4	58.7	65.1	61.3
2. Երկրորդային	50.0	50.7	48.8	49.5
այդ թվում՝				
2.1 Մշակող արդյունաբերություն	45.0	45.6	43.8	44.0
2.2 Էլեկտրաէներգիայի արտադրություն, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	61.9	62.7	59.9	64.2
2.3 Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	71.8	69.5	68.0	71.6
2.4 Շինարարություն	54.6	56.0	53.9	54.4
3. Երրորդային (ծառայություններ, ներառյալ առևտուրը)	73.0	73.0	73.0	73.0
Տնտեսության ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	64.15	63.89	64.08	64.24

Ընդհանուր առմամբ ՀՀ տնտեսության ավելացված արժեքի արտադրության արդյունավետության մակարդակը 2022թ.-ին 2019թ.-ի համեմատ ունեցել է աճի միտում՝ 0.09 տոկոսային կետով (տե՛ս նաև գծապատկեր 1-ը)։

21 Կազմվել և խմբավորվել է հեղինակների կողմից «Հայաստանի ազգային հաշիվները» 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 26-23-ի տվյալների հիման վրա



Գծապատկեր 1. ՀՀ համախառն ավելացված արժեքի արտադրության արդյունավետությունն ըստ տնտեսական գործունեության հատվածների 2019-2022 թթ., տոկոսներով՝ համախառն ավելացված արժեքի հարաբերությունը ռեսուրսների թողարկմանը[22]

Կարևոր հիմնախնդիր է դառնում գտնել այն հարցի պատասխանը թե ՀՀ տնտեսության կառուցվածքի փոփոխության վրա ինչպիսի՞ ազդեցություն են ունեցել տնտեսության առանձին հատվածների արդյունավետության մակարդակները: Այդ նպատակով աղյուսակ 2-ում ներկայացրել ենք ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության հատվածների 2019-2022թթ.-ին:

Աղյուսակ 2-ի տվյալներից, մասնավորապես, հետևում է, որ տնտեսության առաջնային հատվածի բաժինը 2019-2021թթ.-ին ունեցել է աճի միտում՝ 2019թ.-ի 14.8%-ից 2021թ.-ին այն հասել է 16.9%-ի, այդպիսով այս հատվածի բաժինը մեծացել է 2.1 տոկոսային կետով, իսկ 2022թ.-ին այն կազմել է 14.2%՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով 2.7 տոկոսային կետով, իսկ 2019թ.-ի համեմատ՝ 0.6 տոկոսային կետով: Այդուհանդերձ, պետք է նկատել, որ ՀՀ տնտեսության առաջնային հատվածի մեծ մասը զբաղեցնում է գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության տնտեսական գործունեության տեսակը, որը 2019-2022թթ. ընթացքում նվազել է 1.1 տոկոսային կետով, մինչդեռ այդ հատվածի երկրորդ բաղադրիչի՝ «հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» տնտեսության ոլորտի մասնաբաժինը ուսումնասիրվող տարիների ընթացքում ավելացել է 0.5 տոկոսային կետով:

ՀՀ տնտեսության երկրորդային հատվածի բաժինը 2019-2022թթ.-ին նվազել է 0.2 տոկոսային կետով՝ 2019թ.-ի 21.7%-ից 2022թ.-ին հասնելով 21.5%-ի: Նվազել են մշակող արդյունաբերության (0.4 տոկոսային կետով), էլեկտրա-էներգիայի արտադրության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման (0.1 տոկոսային կետով), ջրամատակարարման, կոյուղու, թափոնների

22 Կազմվել և խմբավորվել է հեղինակների կողմից «Հայաստանի ազգային հաշիվները» 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 26-23-ի տվյալների հիման վրա

կառավարման ու վերամշակման (0.1 տոկոսային կետով) գործունեության տեսակների բաժինները, մինչդեռ շինարարության բաժինը ավելացել է 0.4 տոկոսային կետով՝ 2019թ.-ի 6.4 %-ից 2022թ.-ին հասնելով 6.8 %-ի:

Աղյուսակ 2

ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության հատվածների 2019-2022թթ., %-ով ընդհանուրի նկատմամբ[23]

Տնտեսական գործունեության հատվածները	2019	2020	2021	2022
1. Առաջնային	14.8	15.3	16.9	14.2
այդ թվում՝				
1.1 Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսություն	11.5	11.4	11.4	10.4
1.2 Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	3.3	3.9	5.5	3.8
2. Երկրորդային	21.7	23.0	20.8	21.5
այդ թվում՝				
2.1 Մշակող արդյունաբերություն	11.7	12.4	11.0	11.3
2.2 Էլեկտրաէներգիայի արտադրություն, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	3.1	3.3	2.9	3.0
2.3 Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.5	0.4	0.4	0.4
2.4 Շինարարություն	6.4	6.9	6.5	6.8
3. Երրորդային (ծառայություններ, ներառյալ առևտուրը)	52.1	50.8	51.3	53.9
Ավելացված արժեք (համախառն հիմնական գներով)	88.6	89.1	89.0	89.6
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	11.4	10.9	11.0	10.4
Ներքին արդյունք (համախառն շուկայական գներով)	100	100	100	100

Նկատելիորեն ավելացել է ՀՀ տնտեսության երրորդային հատվածը. ծառայությունների (ներառյալ առևտրի) բաժինը 2019թ.-ի 52.1%-ից 2022թ.-ին հասել է 53.9%-ի, այդպիսով ապահովելով 1.8 տոկոսային կետով աճ:

23 Կազմվել և խմբավորվել է հեղինակների կողմից «Հայաստանի ազգային հաշիվները» 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 28-ի տվյալների հիման վրա

Ընդհանուր առմամբ ՀՀ տնտեսության համախառն ավելացված արժեքի բաժինը 2019-2022թթ.-ին ունեցել է աճի միտում՝ 2019թ.-ի 88.6%-ից 2022թ.-ին այն հասել է 89.6%-ի, այդպիսով գրանցելով մեկ տոկոսային կետով աճ: Ընդ որում, նույն չափով էլ նվազել է ՀՆԱ-ի կազմում արտադրանքի հարկերի (հանած սուբսիդիաները) բաժինը: Հատկանշական է, որ ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքային փոփոխությունները ըստ տնտեսական գործունեության հատվածների արդյունավետության մակարդակների գործել է, և այն տնտեսության կառուցվածքի ձևավորման հիմնական գործոն է հանդիսացել, ելնելով այն փաստից, որ ՀՀ տնտեսության ամենաբարձր արդյունավետության մակարդակ ունեցող երրորդային հատվածի բաժինը ավելացել է, իսկ երկրորդային հատվածի բաժինը (որն ունեցել է արդյունավետության ամենացածր մակարդակը) նվազել է (տե՛ս գծապատկեր 2-ը):



Գծապատկեր 2. ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության հատվածների 2019-2022թթ., %-ով ընդհանուրի նկատմամբ[24]

Այդպիսով, կարող ենք արձանագրել, որ ուսումնասիրության համար մեր կողմից ընտրված տարիներին ՀՀ տնտեսության կառուցվածքի ձևավորումը ընթացել է շուկայական սկզբունքներին համապատասխան, որի դեպքում աճել են առավել արդյունավետ հատվածները: Այդ մասին են վկայում նաև աղյուսակ 3-ի և գծապատկեր 3-ի տվյալները:

Աղյուսակ 3-ի տվյալներից հետևում է, որ ՀՀ-ում եկամուտների ձևավորման գործում առաջին տեղը բաժին է ընկնում տնտեսության երրորդային

24 Կազմվել և խմբավորվել է հեղինակների կողմից «Հայաստանի ազգային հաշիվները», 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 28-ի տվյալների հիման վրա

հատվածին, տնտեսությունում ձևավորված եկամուտների բաժինը 2019-2022թթ. միջին տարեկան մեծությունում կազմել է 72.9%:

Աղյուսակ 3

ՀՀ եկամուտների ձևավորման հաշվի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության հատվածների 2019-2021 թթ. միջին տարեկան մեծությունը, տոկոսներով[25]

Տնտեսական գործունեության հատվածները	2019-2021 միջին տարեկանը					
	Ռեսուրսներ	Օգտագործում				
					այդ թվում՝	
	համախառն ավելացված արժեք	վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	արտադրության այլ զուտ հարկեր	համախառն շահույթ և համախառն խառը եկամուտ	հիմնական կապիտալի սպառում	տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ
1. Առաջնային	17.6	11.1	10.0	22.0	22.1	21.9
այդ թվում՝						
1.1 Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսություն	12.8	6.4	4.5	17.2	16.5	17.4
1.2 Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	4.8	4.7	5.5	4.8	5.6	4.6
2. Երկրորդային	24.5	25.9	17.0	23.8	21.3	24.6
այդ թվում՝						
2.1 Մշակող արդյունաբերություն	13.1	12.2	12.5	13.8	9.4	15.1
2.2 Էլեկտրաէներգիայի արտադրություն, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	3.5	4.0	1.4	3.2	7.0	2.1

25 Կազմվել և հաշվարկվել է հեղինակների կողմից «Հայաստանի ազգային հաշիվները», 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 36-38-ի տվյալների հիման վրա

2.3 Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.5	0.5	0.3	0.5	0.6	0.4
2.4 Շինարարություն	7.4	9.2	2.8	6.3	4.3	7.0
3. Երրորդային (ծառայություններ, ներառյալ առևտուրը)	72.9	75.8	81.6	70.8	71.5	70.6
Ավելացված արժեք (համախառն հիմնական գներով)	100	100	100	100	100	100

Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության 75.8%-ը, արտադրության այլ զուտ հարկերի 81.6%-ը, համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների 70.8%-ը ապահովում է ՀՀ տնտեսության այս ոլորտը: Երկրորդային հատվածի բաժինը եկամուտների ձևավորման գործում կազմել է համապատասխանաբար՝ 24.5%, 25.9%, 17.0% և 23.8%, իսկ առաջնային հատվածինը՝ 17.6%, 11.1%, 10.0% և 22.0%: Այլ կերպ ասած, ՀՀ տնտեսությունում եկամուտների ձևավորման «շոգեքարշը», առաջատարը ծառայություններն (ներառյալ առևտուրը, որը ապահովում է եկամուտների ¾-ը):



Գծապատկեր 3. ՀՀ տնտեսության հատվածների ավելացված արժեքի ինդեքսները (2019 թ.=100%), 2019-2022 թթ., %[26]

Աղյուսակ 4-ի տվյալները վկայում են, որ ՀՀ տնտեսության առաջնային, երկրորդային և երրորդային հատվածների կարևորությունը եկամուտների

26 Կազմվել և հաշվարկվել է «Հայաստանի ազգային հաշիվները» 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 20-23-ի տվյալների հիման վրա

ձևավորման գործում նկատելիորեն տարբեր է: Այսպես, եթե վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության բաժինը առաջնային հատվածում կազմել է 24.3%, ապա երկրորդայինում՝ 40.7%, երրորդայինում՝ 40.0%, իսկ ամբողջ տնտեսությունում՝ 38.5%: Արտադրության այլ զուտ հարկերը համապատասխանաբար կազմել են՝ 0.8%, 1.0%, 1.7% և 1.5%, իսկ համախառն շահույթի և համախառն խառը եկամուտները՝ 80.3%, 58.3%, 58.3% և 60.0%: Ինչպես տեսնում ենք եկամուտների ձևավորման հաշվի կառուցվածքի վերլուծությունից, այն տարբեր կառուցվածքային հնարավորություններ է տալիս եկամուտների ձևավորման գործում: Եվ կախված այն հանգամանքից, թե ո՞ր եկամտային հաշվի մեծությանն ենք տալիս նախապատվությունը, ըստ այդմ նշված հատվածների նախընտրելիներից մեկի կամ մյուսի ավելի արագ զարգացման ճանապարհով կարելի է հասնել այդ նպատակի կամ նպատակների կենսագործմանը:

Աղյուսակ 4

ՀՀ տնտեսական գործունեության հատվածների եկամուտների ձևավորման հաշվի կառուցվածքն ըստ եկամուտների ձևավորման բաղադրիչների 2019-2021 թթ միջին տարեկան մեծությունը, տոկոսներով[27]

Տնտեսական գործունեության հատվածները	2019-2021 միջին տարեկանը					
	Ռեսուրսներ	Օգտագործում				
					այդ թվում	
	համախառն ավելացված արժեք	վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	արտադրության այլ զուտ հարկեր	համախառն շահույթ և համախառն խառը եկամուտ	հիմնական կապիտալի սպառում	տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ
1. Առաջնային	100	24.3	0.8	74.9	18.0	56.9
այդ թվում՝						
1.1 Գյուղատնտեսության, անտառային	100	19.2	0.5	80.3	18.4	61.9

27 Կազմվել և հաշվարկվել է հեղինակների կողմից «Հայաստանի ազգային հաշիվները» 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 39-41-ի տվյալների հիման վրա

տնտեսության և ձկնորսություն						
1.2 Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	100	37.9	1.7	60.4	16.8	43.6
2. Երկրորդային	100	40.7	1.0	58.3	12.4	45.8
այդ թվում՝						
2.1 Մշակող արդյունաբերություն	100	35.7	1.4	62.9	10.3	52.6
2.2 Էլեկտրաէներգիայի արտադրություն, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	100	43.7	0.6	55.6	28.7	27.0
2.3 Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	100	42.2	0.9	56.9	16.2	40.7
2.4 Շինարարություն	100	48.1	0.6	51.3	8.4	42.9
3. Երրորդային (ծառայություններ, ներառյալ առևտուրը)	100	40.0	1.7	58.3	14.1	44.2
Ավելացված արժեք (համախառն հիմնական գներով)	100	38.5	1.5	60.0	14.3	45.7

Գիտական նորույթ: Հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակների կողմից կատարվել է ՀՀ տնտեսության մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների ուսումնասիրությունը՝ ըստ տնտեսության առաջնային, երկրորդային և երրորդային հատվածների բաժանման (ինչը տարբերվում է ՀՀ-ում վարվող վիճակագրության տնտեսության ոլորտների բաժանումից), որի արդյունքում բացահայտվել են նշված երեք հատվածների զարգացման օրինաչափություններ ու հետագա զարգացման հեռանկարները:

Եզրակացություն: Երկրի տնտեսության կառուցվածքը և դրա արդյունավետության հիմնահարցը վերաբերում է տնտեսագիտության այն բնագավառին, որի օգնությամբ և միջոցով ձևավորվում է կառավարության սոցիալ-տնտեսական զարգացմանը նվիրված ինչպես միջնաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ռազմավարական ծրագրերը: Հիմք ընդունելով դրանք մշակվում, զարգանում և իրականացվում են կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականության ընթացիկ ծրագիրը: Ավելին՝ տնտեսության կառուցվածքն այն հիմքն և սկզբնակետն է, որը դառնալու է սոցիալ-տնտեսական

ծրագրերի միջուկը, քանի որ դրա հիման վրա է կազմակերպվում երկրի ՀՆԱ-ի վերարտադրությունը (արտադրությունը, բաշխումը, փոխանակումը և սպառումը)։ Անհրաժեշտ է նաև նկատել, որ ՀՆԱ-ի միջոցով է ապահովվում ինչպես բնակչության, այնպես էլ պետության պետական բյուջեի եկամուտների ավելացումը կամ այլ կերպ՝ այդպիսով կանխորոշվում է երկրի ներսում իրականացվող ծախսերի (սպառման և կուտակման) մակարդակը և համամասնությունները։

Տնտեսության կառուցվածքը ստեղծվում, ձևավորվում և զարգանում է որոշակի պայմաններում և միջավայրում։ Վերջինիս վրա ազդում են բազմաթիվ՝ աշխարհագրական, մշակութային, քաղաքական, սոցիալական, տնտեսական, անվտանգային և այլ գործոններ։ Ըստ որում՝ ժամանակին համընթաց փոխվում են նաև այդ գործոնների ազդեցությունները տնտեսության և դրա կառուցվածքի շարժի վրա՝ առանձին գործոնների դերն ու ազդեցությունն ավելանում է, մյուսներինը՝ ընդհակառակը նվազում է։

Երկրի տնտեսության կառուցվածքը դինամիկ համակարգ է, որի վրա ազդում են տեխնոլոգիական առաջընթացները, սոցիալ-տնտեսական քաղաքականության փոփոխությունները, տարածաշրջանային և համաշխարհային տնտեսական միտումները և զարգացումները։ Այս կառույցների ըմբռնումը օգնում է քաղաքականություն կերտողներին և տնտեսագետներին մշակել կայուն տնտեսական աճի և զարգացման ռազմավարություններ։

ՀՀ տնտեսությունը դիտարկելով որպես առաջնային, երկրորդային և երրորդային հատվածների ամբողջություն և միասնություն քննարկվել և վերլուծվել են նշված հատվածների զարգացման և փոփոխման օրինաչափություններն ու համամասնությունները, դրանք դիտարկվել են արդյունավետության կողմնորոշիչների տեսանկյունից և բացահայտվել է առանձին հատվածների արդյունավետության մակարդակի ազդեցությունը հատվածների զարգացման ընթացքի վրա։ Ըստ որում, 2019-2022 թթ.-ին ՀՀ ծառայությունների (երրորդային հատվածը) աճել է 127.1%-ով, երկրորդայինը՝ 125.5%-ով, իսկ առաջնայինը՝ 102.0%, այդպիսով ապահովելով տնտեսության լավագույն կառուցվածքի ձևավորման գործընթացը։ Տնտեսության այդպիսի կառուցվածքը հանգեցրել է նրան, որ երրորդային հատվածը (ծառայությունները) ապահովել են ՀՀ եկամուտների ավելի քան 71%-ը, ինչը պայմանավորված է երրորդային հատվածի կազմակերպման և իրականացման գործընթացներով (բարձր աշխատատարությունը, կապիտալի արագ շրջանառություն և բարձր եկամտաբերություն)։

Թեև ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից պարբերաբար հաշվարկվում և հրապարակվում են ՀՀ տարածքում տնտեսական գործունեության առանձին տեսակների (21) ու դրանց ավելացված արժեքի վերաբերյալ տվյալները, սակայն կարծում են, որ իմաստ ունի այդ տվյալները հրապարակել միջազգային պրակտիկայում ընդունված տնտեսական գործունեության հատվածների՝ առաջնային, երկրորդային և երրորդային կտրվածքով։ Դրանով իսկ առավել առարկայական և որոշակի տեսք կունենա ՀՀ տնտեսության կառուցվածքը, ինչը

կնպաստի տնտեսության կառուցվածքի կարգավորման գործընթացին, և բացի այդ թույլ կտա կատարել նաև միջերկրային համադրություններ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2023, Եր., ՀՀ ՎԿ, 2023թ., էջ 287-288
2. Первичный и вторичный сектора экономики (spravochnick.ru)
3. Մարկոսյան, Ա., Խաչատուրյան, Վ., Մաթևոսյան, Է., Ժամանակակից պետության տնտեսագիտություն. տնտեսության պետական կարգավորման գործիքակազմը, Եր., Անտարես հրատ., 2020թ., 628 էջ
4. Քեյնս, Ջ., Զբաղվածության տոկոսի և փողի ընդհանուր տեսություն, Եր., «Տիգրան Մեծ», 2006, 350 էջ: Առաջաբանը և խմբագրությունը Ա.Մարկոսյանի
5. Brown, T., Green, R., Mining Economics. Boulder: Rocky Mountain Press, 2017, p. 112
6. Clark, P., Construction Economics. London: Builder's Guild Press, 2021, p. 134
7. Johnson, L., The Knowledge Economy. Cambridge: Knowledge Press, 2018, p. 155
8. Jones, A., Agricultural Economics: An Overview. London: Greenleaf Publishing, 2018, p. 67
9. Marshall, A., Principles of Economics. London: Palgrave Macmillan, 2015, p. 23
10. Miller, S., Clark, D., Economic Structures of Developed Nations. New York: Global Economics Press, 2018, p. 78
11. Peters, H., Leadership and Economic Strategy. Oxford: Strategy Publications, 2020, p. 203
12. Smith, J., Economic Structures and Growth. New York: Economic Press, 2020, p. 45
13. White, H., Manufacturing and Industrial Growth. Chicago: Midwest Books. 2019, p. 89
14. Wilson, R., The Service Sector in Modern Economies. New York: Service Sector Publishers, 2022, p. 56
15. Sanchez, P., Development Economics: Transitions and Growth. Rio de Janeiro: South American Press, 2019, pp. 144
16. «Հայաստանի ազգային հաշիվները» 2023, Եր., ՀՀ ՎԿ, 2023թ
17. Ժամանակագրական շարքեր / Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (armstat.am)
18. Կապիտալիստական երկրներ, https://worldpopulationreview.com/country-rankings/capitalist-countries, էլ. ռեսուրսը առկա է 13.09.2024թ. դրությամբ
19. World Development Indicators | The World Bank

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԷԼՅԱՆՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածի արդիականությունը՝ Երկրի տնտեսության վիճակը կարող է բնութագրվել և որոշել տարբեր ցուցանիշների և դրանց համակարգերի միջոցով։ Որպես կանոն, այդ հիմնախնդրի լուծման համար տնտեսագիտության տեսության ու տնտեսական քաղաքականության մշակողների կողմից օգտագործվում են որոշակի մակրոտնտեսական, միկրոտնտեսական, մեզոտնտեսական և մեգատնտեսական ցուցանիշներ և չափանիշներ։ Ըստ որում, այդ ցուցանիշները և դրանց համակարգերը ունեն իրենց յուրահատուկ կիրառման նպատակները և տնտեսությունը գնահատում են տարբեր տեսանկյուններից և մասշտաբներով։

Տնտեսության կառուցվածք ասելով մասնագետները հասկանում են դրա կազմի մեջ մտնող տնտեսական գործունեության տեսակների արդյունքների (ավելացված արժեքի) բաժինը (տեսակարար կշիռը) տնտեսության ստեղծած ամբողջական արդյունքի մեջ։ Նման մոտեցումը ենթադրում է, որ տնտեսության առանձին բաղադրիչներն են ձևավորում տնտեսության ստեղծած ամբողջական արդյունքի մեծությունը։ Եվ քանի որ յուրաքանչյուր ժամանակահատվածում տնտեսության այդ բաղադրիչները արդյունավետության տարբեր մակարդակներ ունեն, ուստի կարևորվում է տնտեսության կառուցվածքի արդյունավետությունը։ Կախված այն բանից, թե արտադրական ռեսուրսները ինչպես են օգտագործվում տնտեսական գործունեության տարբեր տեսակներում, դրանք հավասարամեծ ծախսերի պայմաններում կարող են ապահովել տարբեր արդյունքներ, ուստի քաղաքականություն մշակողների նպատակը պետք է լինի՝ նպաստել տնտեսության այնպիսի կառուցվածքի ձևավորմանը, որը կապահովի վերջնական արդյունքի ամենամեծ արժեքը։

Հոդվածի նպատակն է բացահայտել Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքը և դրա արդյունավետության մակարդակը, կիրառելով միջազգայնորեն ընդունված բաժանումը տնտեսության առաջնային, երկրորդային և երրորդային հատվածների։

Նշված նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ **խնդիրները**՝

➢ ուսումնասիրել ՀՀ տնտեսության առաջնային, երկրորդային և երրորդային հատվածների համապատասխանությունը ՀՀ-ում կիրառվող տնտեսության ոլորտների (տնտեսական գործունեության տեսակների) վիճակագրական բաժանմանը,

➢ ուսումնասիրել ՀՀ տնտեսության առաջնային, երկրորդային և երրորդային հատվածների զարգացման ռեսուրսային ապահովվածությունը, մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների շարժընթացը,

➢ ներկայացնել ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությունների հնարավորությունները և արդյունավետության մակարդակի բարձրացման վերաբերյալ մոտեցումներ:

Ուսումնասիրության **մեթոդաբանությունը** հիմնված է տնտեսության կառուցվածքային փոփոխությունները նկարագրող ժամանակակից տեսությունների ուսումնասիրության, վիճակագրության վարման նպատակով տարբեր երկրներում կիրառվող տնտեսության ոլորտային (հատվածային) բաժանման, վիճակագրական շարքերի կազմման և վիճակագրական ցուցանիշների շարժընթացի ուսումնասիրության վրա:

Գիտական նորույթը: Հոդվածի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակների կողմից կատարվել է ՀՀ տնտեսության մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների ուսումնասիրությունը՝ ըստ տնտեսության առաջնային, երկրորդային և երրորդային հատվածների բաժանման (ինչը տարբերվում է ՀՀ-ում վարվող վիճակագրության տնտեսության ոլորտների բաժանումից), որի արդյունքում բացահայտվել են նշված երեք հատվածների զարգացման օրինաչափություններ ու հետագա զարգացման հեռանկարները:

Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունը: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել ՀՀ-ում տնտեսական քաղաքականություն իրականացնող պետական մարմինների համար՝ իրենց կողմից համալիր (զարգացման) ծրագրերի մշակման գործում, ինչպես նաև տնտեսության կառուցվածքային փոփոխություններն ու արդյունավետությունը ուսումնասիրող մասնագետների համար:

Բանալի բառեր: տնտեսության կառուցվածք, տնտեսական գործունեության տեսակներ, տնտեսության ոլորտներ, տնտեսության կառուցվածքի արդյունավետության չափորոշիչ, տնտեսության առաջնային, երկրորդային և երրորդային հատվածներ:

СТРУКТУРА ЭКОНОМИКИ И ОЦЕНКА ЕЕ ЭКОНОМИЧЕСКОЙ ЭФФЕКТИВНОСТИ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

АШОТ МАРКОСЯН
ЭЛЯНОРА МАТЕВОСЯН
МЕРУЖАН МАРКОСЯН

Аннотация

Актуальность статьи. Состояние экономики страны можно охарактеризовать и определить с помощью различных показателей и/или системы показателей. Как правило, для решения этой задачи разработчики экономической

теории и экономической политики используют определенные макроэкономические, микроэкономические, мегаэкономические и мезоэкономические показатели и индикаторы. При этом, каждый из таких индикаторов применяется исходя из определенных целей, установленных в исследовании, а также они дают возможность оценивать экономику с разных точек зрения и в разных масштабах.

Под структурой экономики специалисты понимают долю (удельный вес) результатов (добавленной стоимости) входящих в ее состав видов экономической деятельности в общем результате, созданном экономикой. Такой подход предполагает, что отдельные отрасли экономики вносят свой вклад в общий объем производства, произведенный экономикой. А поскольку эти отрасли экономики имеют разные уровни эффективности в каждый период времени, то становится важным определение эффективности структуры экономики в целом. В зависимости от того, как используются производственные ресурсы в разных видах экономической деятельности, они могут создавать различные результаты при равных затратах, поэтому целью специалистов, разрабатывающих экономическую политику должно стать содействие формированию такой структуры экономики, которая обеспечит наибольшую величину конечного результата экономики.

Целью статьи является исследование структуры экономики Республики Армения и уровня ее эффективности, применяя международно принятое разделение на первичный, вторичный и третичный секторы экономики.

Для достижения этой цели перед нами были поставлены следующие **задачи**:

- изучить соответствие первичного, вторичного и третичного секторов экономики РА разделению отраслей экономики по видам экономической деятельности, используемому в РА в статистических целях,
- изучить ресурсную обеспеченность развития первичного, вторичного и третичного секторов экономики РА, а также динамику основных макроэкономических показателей,
- представить предложения о возможности структурных изменений экономики РА и подходы к повышению уровня ее эффективности.

Методика исследования основана на изучении современных теорий, описывающих структурные изменения экономики, отраслевое (сегментарное) деление экономики, используемых в разных странах с целью ведения статистики, составления статистических рядов и изучения динамика статистических показателей.

Научная новизна. Научная новизна статьи заключается в том, что авторы провели исследование основных макроэкономических показателей экономики РА согласно разделению на первичный, вторичный и третичный секторы экономики (что отличается от разделения секторов экономики РА в статистических целях), в результате чего были выявлены закономерности и перспективы дальнейшего развития указанных трех секторов.

Возможность применения полученных результатов. Результаты исследования могут быть полезны государственным органам, реализующим экономическую политику РА, при разработке ими комплексных (целевых) программ развития, а также специалистам, изучающим структурные изменения и эффективность экономики.

Ключевые слова. структура экономики, виды экономической деятельности, отрасли экономики, показатель эффективности структуры экономики, первичный, вторичный и третичный секторы экономики.

STRUCTURE OF THE ECONOMY AND ASSESSMENT OF ITS EFFICIENCY (CASE OF ARMENIA)

ASHOT MARKOSYAN
ELYANORA MATEVOSYAN
MERUZHAN MARKOSYAN

Abstract

Relevance of the article. The state of the country's economy can be characterized and determined using various indicators and/or a system of indicators. As a rule, to solve this problem, economic theory and economic policy developers use certain macroeconomic, microeconomic, mega economic, and mesoeconomic indicators. At the same time, each of these indicators is used based on certain goals set in the study, and they also make it possible to evaluate the economy from different perspectives and on different scales.

Experts understand the structure of the economy as the share (specific weight) of the results (added value) of the types of economic activity included in its composition in the overall result created by the economy. This approach assumes that individual sectors of the economy contribute to the total volume of production produced by the economy. Since these sectors of the economy have different levels of efficiency in each period, it becomes important to determine the efficiency of the structure of the economy as a whole. Depending on how production resources are used in different types of economic activity, they can create different results with equal costs, therefore the goal of economic policymakers should be to promote the formation of such an economic structure that will ensure the greatest value of the final result of the economy.

The purpose of the article is to study the structure of the Armenian economy and the level of its efficiency, using the internationally accepted division into primary, secondary, and tertiary sectors of the economy. **To following research tasks** were set:

- To study the compliance of the primary, secondary, and tertiary sectors of the economy of the RA with the division of economic sectors by types of economic activity used for statistical purposes,
- to study the resource security of the development of the primary, secondary, and tertiary sectors of the economy of the RA, as well as the dynamics of the main macroeconomic indicators,
- to provide proposals on the possibility of structural changes in the Armenian economy and approaches to increasing the level of its efficiency.

The research methodology is based on the study of modern theories describing structural changes in the economy, and sectoral (segmental) division of the economy, used in different countries to maintain statistics, compiling statistical series, and studying the dynamics of statistical indicators.

Scientific novelty. The scientific novelty of the article lies in the fact that the authors conducted a study of the main macroeconomic indicators of the RA economy according to the division into primary, secondary, and tertiary sectors of the economy (which differs from the division of sectors of the RA economy for statistical purposes), as a result of which patterns and prospects for further development of these three sectors were identified.

Practical implications. The research findings can be useful for state policymakers when developing comprehensive (targeted) development programs, as well as for specialists studying structural changes and economic efficiency.

Keywords. economic structure, types of economic activity, economic sectors, economic structure efficiency indicator, primary, secondary, and tertiary sectors of the economy.